ըստ կարի մերում հոգ տանել, որով ազգայինք մեզմէ եւ մեք յազգայնոց գոհ և շնորհակալ եմք։

Ուրեմն ինչ կը մնտռէ այդ անձը՝ որ վարժատան վերնագիրը մրոտելուն նման մթութեան մէջ առանց ստորագրութեան նամակ հրատարակել կը տայ։ Մեք այդպիսեաց նպատակն ուրիշ բան չեմք տեսներ, բայց եթէ գործողներու ոյժը ջլատել և վարժատան յառաջադիմութեան համար նիւթական օգնութեան խորհուրդ խորհողներու խորհուրդն խափանել։ Աղաչեմք զԱստուած՝ որ այդպիսի անձանց, ուր ուրեք որ կան զգաստութեան հոգի տայ. որպէս զի նախանձու մահաբեր քնէն արթննալով կենաց և հոգւոյ փրկութեան արժանանան։

Սա եւս չը մոռնամք ասել, որ մեք մեր դաշնադրութիւնը ազգին հետ ըրած լինելով, եթէ ես Սաղաթիէլեանը և Սաղաթիէլեանք ճշդիւ չը գործադրեմք՝ մեղադրելի եմք և արդարև կ'անիրաւիմք. նոյնպէս յազգայնոց ովոք և իցէ եթէ համարձակի մեր դաշնադրութիւնը ոտքի տակ առնուլ նոյնպէս կ'անիրաւի և չէ կարելի. վասն զի իմ դաշինքս ոչ թէ անհատի այլ ազգիս հետ է։

Այսչափ խօսելէ վերջը Քրիստոնէական անչիշաչարութեամբ իմ չարակամ թշնամեացս բարիք կը մաղթեմ և ազգիս Հայոց ու Հայրենակցացս անդորրութիւն և խաղաղութիւն հայցելով կը մնամ ազգիս օգտին համար պատրաստական ծառայ։

1884. Յ—նվար 17։

Մ—հրեի Կարապետ
Սաղաթիէլեան։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամսոյս 7ին Ս. Ծննդեան հանդէսը ամենայն խաղաղութեամբ կատարուեցաւ ըստ սովորութեան։

—Հետեւեալ զարմանալի լուրը Յոպպէի Արժ. Տեսուչը հաղորդեց 23ին։

«Մօտ օրերս Գազայի մէջ հետեւեալ հետաքրքրական դէպքն տեղի ունեցած է. գողին մէկը գիշեր ատեն տուն մը կը մտնէ, ուր միայն երեք հոգի կան եղեր, այն է հայր մը, մայր մը և փոքրիկ տղայ մը։ Գողը երբ կրակոսի տան մէջի եղածներն ժողովել, տղան որ արթուն է եղեր, կակսի լալ. գողը որպէս զի տղուն լացէն հայրն ու մայրը չ'արթննան, դուրս կը տանի տղայն և դառնալով իւր գործը կը շարունակէ. տղայն դարձեալ կը լայ, որոյ վերայ հայրն և մայրն արթննալով՝ կը լսեն տղուն ձայնը, որ դուրսէն կը գայ. անմիջապէս դուրս կը դիմեն, գողն եւս որպէս զի չը տեսնուի դուռան ետեւ կը պահուի. որ ատեն տունը յանկարծ կը փլի, տան տէրը իւր ընտանեօք հանդերձ կաղատի, իսկ աւազակը իւր չարութեանն զոհ կը լինի. երկրորդ օրը տունը մաքրելու ատեն զարմանալով մեռած մարդ մը կը գտնեն դուռան ետեւ որուն քով և կը գտնեն պարկ մը տան կարասեօք լեցուած, յորմէ կիմացուի մարդուն աւազակի լինելն»։

Ճշմարիտ է, որ Աստուած շատ անգամ թոյլ կը տայ չարագործին իւր կամքին հետեւելու, շատ անգամ կրպասէ համբերութեամբ, որ անօրէնը իւր անօրէնութեանն ճանապարհէն դառնայ, բայց երբ նա՝ Աստուծոյ համբերութիւնը 'ի չարն գործ կը դնէ, այն ժամանակ Աստուած եւս իւր արդարութիւնը կսկսի 'ի գործ դնել այս աշխարհի մէջ տարբեր զանազան պատիժներ, ինչպէս պարզ կերպիւ կը տեսնուի վերոյգրեալ դէպքէն։

digitised by A.R.A.R.@